Ո՞ւր Կարելի Է Գտնել Հույս

Ինչպես է Աստուած մեր կարիքները հոգում
Մաս 1

«Եվ հույսի Աստվածը թող ձեզ ամեն ուրախությամբ և խաղաղությամբ լցնի հավատի մեջ, որպեսզի Սուրբ Հոգու զորության հույսով առատանաք։» Հռոմեացիներին 15:13

«...պիտի ապավինեմ քո անվանը, որովհետև բարի է.» Սաղ 52:9

Եհովա Շամմահ-«Աստուած միշտ ներկայ է»

Աստուած միշտ ինձ հետ է, Որովհետև...

1. Իր Ներկայութիւնը հսկում է Ինձ

Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ հետ եմ, մի՛ զարհուրիր, Որովհետև ես քո Աստվածն եմ: Ես քեզ կզորացնեմ և կօգնեմ քեզ, նաև քեզ նեցուկ կլինեմ իմ արդար աջով։» Եսայի 41:10

«Կուսուցանեմ քեզ և կսովորեցնեմ քեզ այն ճանապարհը, որով պիտի գնաս. կխրատեմ քեզ, իմ աչքը քեզ վրա կլինի։» Սաղմոսներ 32:8

«Սրանք ես իմ միտքն եմ բերում, ուստի և հույս ունեմ: Տիրոջ ողորմությունը չի դադարում, նրա գթությունը վերջ չունի: Նրանք ամեն առավոտ նորանում են.» Երեմիայի Ողբերը 3:21-2

2. Իր նպատակը ինձ մէջ գործում է

«Բայց գիտենք, որ ամեն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն և կանչված են նրա կամքով։» Հռոմեացիներին 8:28

Որովհետև ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- բարօրության խորհուրդներ և ոչ թե չարիքի, որպեսզի ձեզ ապագա և հույս տամ։» Երեմիա 29:11

«Եվ հաստատ համոզված եմ սրանում, որ նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, ավարտին կհասցնի մինչև Հիսուս Քրիստոսի օրը։» Փիլիպպեցիներին 1:6

3. Իր պատրաստած տեղը սպասում է ինձ

«Ձեր սրտերը թող չխռովվեն. հավատացե՛ք Աստծուն, հավատացե՛ք նաև ինձ...գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու։» Հովհաննես 14:1-2

«Այն անեղծ, անարատ ու անթառամ ժառանգության համար, որ երկնքում պահված է ձեզ համար, որ Աստծու զորությամբ հավատով պահպանվում եք փրկության համար, որ պատրաստ է հայտնվելու վերջին ժամին: Նրանով կուրախանաք, թեև հիմա պետք է որ տարատեսակ փորձություններից փոքր-ինչ տրտմած լինեք.» Ա Պետրոս 1:4-6

«Եվ նրանց աչքերից պիտի սրբի ամեն արտասուք. այլևս մահ չի լինելու, չի լինելու նաև ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ, որովհետև նախկիններն անցան։» Հայտնություն 21:4

«Լսե՛ք ինձ, որ բեռնավորել էիք ձեր ծննդից, որոնց ես կրեցի ձեր մոր արգանդից: Մինչև ձեր ծերությունն էլ ես եմ նա, մինչև ալևորություն կկրեմ ձեզ. ե՛ս ստեղծեցի, ե՛ս կկրեմ և կազատագրեմ ձեզ: Ո՞ւմ եք նմանեցնում ինձ և հավասարեցնում, ո՞ւմ հետ եք ինձ համեմատում։» Եսայի 46:3-5

«Օրհնյալ է Աստված և Հայրը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ իր առատ ողորմությամբ մեզ վերստին ծնեց կենդանի հույսի համար՝ մեռելներից Հիսուս Քրիստոսի հարությամբ.» Ա Պետրոս1:3

«Տիրոջն ապավինողները կնորոգվեն ուժով, արծիվների պես թևերով վեր կսլանան, կվազեն և չեն հոգնի, կգնան և չեն նվաղի։» Եսայի 40:31

Հաջորդ Քարոզի Թեման:

«Ինչպես է Աստուած բժշկում քո ներքին վերքերը»

Հովիվ Սարօ Խաչիկեան